



Տարեկան հաշվետվություն

Annual report

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր գործադիր տնօրենի խոսք	04
Հիմնական ցուցանիշներ	06
Մանրածախ բիզնես	07
ՓՄՁ և կորպորատիվ բիզնես	10
Գյուղատնտեսական բիզնես	12
Նորարարություն և թվայնացում	14
«ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ	15
«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ	17
«ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ	18
Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ	19

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔ

Հարգելի գործընկեր,

2020թ.-ը չափազանց բարդ և ծանր տարի էր: Սկզբում կորոնավիրուսային համաճարակը, իսկ հետո՝ ծանր հետևանքներով պատերազմը: Այս երկու արհավիրքների շրջանում մեր բանկը հանդիպեց բազմաթիվ դժվարությունների, որոնք երբեմն նաև անհաղթահարելի էին թվում: Սակայն, ի պատիվ մեր թիմի և մեր միասնականության, ի պատիվ մեր նվիրումի, բանկը կարողացավ հաղթահարել իր առջև ծագած մարտահրավերները:

Տարին բարդ էր տնտեսության կայունության պահպանման տեսանկյունից: Կորոնավիրուսային համաճարակի տարածման սկզբից բանկը նախաձեռնեց լայնածավալ ծրագրեր, որոնք պետք է ոչ միայն աջակցեին հաճախորդին, այլ նաև պետությանը՝ մեր երկրին: Մենք նախաձեռնեցինք «վարկային արձակուրդների» տրամադրման գործընթաց, շարունակեցինք հավատալ և ֆինանսավորել ծանր վիճակում գտնվող ՓՄՁ-ներին՝ օգնելով նրանց պահպանել իրենց կենսունակությունն ու մրցունակությունը, կատարեցինք վարկային գրաֆիկների փոփոխություններ, որոնք ևս հաճախորդներին հնարավորություն տվեցին խուսափել անցանկալի հետևանքներից: Բանկը մասնակից դարձավ պետության կողմից իրականացվող «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերին», ինչպես նաև պետությանը տրամադրեց դրամական խոշոր նվիրատվություն՝ համաճարակի դեմ պայքարելու համար:

Այնուհետև մեր Հայրենիքը ևս մեկ՝ անդառնալի հարված ստացավ: Պատերազմի ընթացքում բոլորս կատարեցինք առավելագույնը՝ ի նպաստ մեր երկրի: Բանկն առաջին իսկ րոպեից նախաձեռնեց օգնության միջոցառումների շարունակական շարք՝ աջակցելու Արցախի մեր հայրենակիցներին: Բանկը ֆինանսավորեց տեղահանված մեծաթիվ արցախցիների կեցության ապահովման ծախսերը, տրամադրեց հսկայական աջակցություն: Եվ այս ամենը կրկին ու կրկին մեր աշխատակիցների մեծ նվիրումի շնորհիվ:

2020թ.-ին բանկը և մեր ֆինանսական խմբի մյուս երկու անդամները՝ ԱԳԲԱ Լիզինգը և Ամունդի-ԱԿԲԱ-ն, «Հայաստան» համահայկական հիմնադրամին և «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամին, ինչպես նաև երկրում առաջացած այլ կարիքների լուծման համար տրամադրեց շուրջ 273 388 000 ՀՀ դրամ գումար: Նշվածից բացի, մենք նախաձեռնեցինք բարեգործական ևս մեկ միջոցառում, ըստ որի, բանկի յուրաքանչյուր քարտով կատարված վճարային գործարքի 0,3%-ը բանկն իր միջոցների հաշվին ուղղեց և շարունակում է ուղղել «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամին:

Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ 2020թ.-ը, որքան էլ ծանր ու անդառնալի էր իր հետևանքներով, այնուամենայնիվ, բանկը կարողացավ հասնել իր առջև նախապես դրված նպատակներին: Նախ, մենք նախաձեռնեցինք վերաբրենդավորման գործընթաց և վերակազմավորվեցինք «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի: Այս քայլը բանկի համար նոր հորիզոնների ու նպատակների հիմք է, բայց նաև նոր մարտահրավերների սկիզբ: Ես վստահ եմ, որ մեր անցած ճանապարհը, մեր բանկի պատմությունն ու գաղափարները մեզ կոգեշնչեն մեր նոր ճանապարհին:

2020թ.-ին մենք շարունակեցինք բանկի թվային տրանսֆորմացիայի փուլը: Acba digital-ը նոր շունչ հաղորդեց հայաստանյան բանկային շուկային: Մեր կատարած այս մեծ աշխատանքի շնորհիվ բանկի հաճախորդների և գործընկերների համար բանկային ծառայություններից օգտվելը դարձավ ավելի պարզ ու հարմարավետ: Այս ամենին զուգահեռ, մեզ համար խիստ կարևոր է ամրապնդել նաև միջազգային գործընկերների հետ մեր հարաբերությունները՝ նոր մակարդակի հասցնելով աշխատանքային գործընթացները: Այս համագործակցությունների շնորհիվ մենք կարողացանք մեծածավալ միջոցներ ուղղել փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը:

Միաժամանակ, պետք է նշել, որ 2020թ.-ին բանկն աջակցել է կրթական, առողջապահական, մաքուր էներգիայի, օրգանական գյուղատնտեսության ոլորտներին, հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրներով զբաղվող, ինչպես նաև գիտական և կրթական գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին:

Հաշվետու տարում «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը շարունակեց իրականացնել ամենամյա դրամաշնորհային ծրագիր: Հիմնադրամի ֆինանսավորմամբ հնարավորություն ընձեռվեց սոցիալ-տնտեսական և գիտակրթական ոլորտներում կյանքի կոչել հասարակության համար օգտակար և հեռանկարային ծրագրեր: Հիմնադրամի բարեգործական գործունեությունը շարունակվելու է նաև 2021թ.-ին:

Վստահ եմ, որ համատեղ ուժերով մեր ամբողջ թիմով, մենք կհաղթահարենք մեզ սպասվող բոլոր մարտահրավերները, նորանոր հաջողություններ կգրանցենք և Ակբա բանկը կշարունակի բարձր արդյունքներ գրանցել Հայաստանի ֆինանսական համակարգում: Մեր բոլոր նախաձեռնությունները շարունակելու են միտված լինել մեր հաճախորդներին բանկային առավել հարմարավետ լուծումների տրամադրմանը և բանկի կայուն զարգացմանը:

Ոգեշնչված ձեզնով...

Գլխավոր գործադիր տնօրեն՝
Հակոբ Անդրեասյան



ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)	2018	2019	2020		
Ընդհանուր ակտիվներ	349 492	432 613	495 632	14.6%	↑
Ընդհանուր պարտավորություններ	285 803	363 970	425 123	16.8%	↑
Սեփական կապիտալ	63 689	68 643	70 509	2.7%	↑
Շահույթ մինչև հարկում	8 073	8 998	3 774	-58%	↓
Վարկային պորտֆել	206 013	275 443	303 019	10%	↑
Ավանդային պորտֆել	201 775	254 668	296 944	16.6%	↑
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ					
Մասնաճյուղեր	59	60	62	3%	↑
Բանկոմատներ	183	186	191	2.7%	↑
Կանխիկ ընդունման տերմինալներ	105	121	153	26%	↑
POS-տերմինալներ	1 530	1 801	3 614	101%	↑
ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ					
Աշխատակիցներ	1 501	1 493	1 518	1.7%	↑
Հաճախորդներ	319 478	339 299	353 982	4.3%	↑
«ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)					
Ընդհանուր ակտիվներ	18 473	23 430	27 978	19.4%	↑
Ընդհանուր պարտավորություններ	14 356	18 741	23 068	23%	↑
Սեփական կապիտալ	4 118	4 689	4 910	4.7%	↑
Շահույթ մինչև հարկում	569	731	269	-63%	↓
Լիզինգային պորտֆել	15 257	20 313	25 017	23%	↑
«ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)					
Ընդհանուր ակտիվներ	1 319	1 715	2 316	35%	↑
Ընդհանուր պարտավորություններ	101	196	310	58%	↑
Սեփական կապիտալ	1 218	1 519	2 006	32%	↑
Շահույթ մինչև հարկում	388	535	935	75%	↑

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

2020թ.-ի բազմաթիվ մարտահրավերներին ընդառաջ բանկն իրականացրել է մի շարք նախագծեր՝ ստեղծելով նոր հնարավորություններ և ժամանակի պահանջներից բխող լուծումներ, որոնց արդյունքում զգալիորեն բարելավվեցին մանրածախ բիզնեսի հաճախորդներին առաջարկվող պրոդուկտների պայմանները:

2020թ.-ի վերջին բանկի մանրածախ բիզնեսի հաճախորդների քանակը նախորդ տարվա համեմատ աճեց **5.6%-ով**՝ հասնելով 200 201-ի:

2020թ.-ի Մանրածախ բիզնեսի հաճախորդների քանակ



Հաճախորդների վարկավորման նոր հնարավորություններ

2020թ.-ի ընթացքում ներդրվեց պայմանագրերի էլեկտրոնային եղանակով ստորագրելու հնարավորությունը՝ վարկավորման պարզ գործընթացի արդյունքում նպաստելով հաճախորդների ժամանակի խնայմանը, ինչպես նաև նվազեցնելով համաճարակով պայմանավորված ռիսկերը: Վարկատեսակների զգալի մասը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով ստորագրությամբ:

□ **էլեկտրոնային ստորագրությամբ տրամադրված վարկերի արդյունքում խնայվել է ավելի քան 260 000 թուղթ:**

2020թ.-ին ավարտին հասցվեց Ապառիկ տեղում պրոդուկտի տրամադրման համար նախատեսված նոր հարթակի ներդրումը, ինչը հնարավորություն ընձեռեց ընդամենը 2 տվյալի մուտքագրմամբ ավտոմատ կերպով տրամադրել վարկավորման վերաբերյալ որոշում: Հարթակի ներդրումը նպաստեց համագործակցող կազմակերպությունների աշխատակիցների գոհունակությանը, վարկավորման գործընթացի արագացմանը և մուտքագրվող հայտերի քանակի աճին:

□ **2020թ.-ին Ապառիկ տեղում պրոդուկտի շրջանակում տրամադրված վարկերի ծավալը կազմել է շուրջ 9 մլրդ. ՀՀ դրամ**


Հիփոթեքային վարկեր

2020թ.-ին շարունակելով կառուցապատողների հետ սերտ համագործակցությունը, բանկը թվով 4 նոր կառուցապատող ընկերությունների հետ կնքել է համագործակցության պայմանագիր և տրամադրել է **2.6 մլրդ ՀՀ դրամ** գումարի չափով հիփոթեքային վարկ:

Հաճախորդների սպասարկումն ավելի արդյունավետ և պարզ դարձնելու համար բանկը մշտապես բարելավում և պարզեցնում է հիփոթեքային վարկի հետ առնչվող գործընթացները: Այժմ՝ եկամտահարկից փոխհատուցում ստանալու համար ՀՀ պետական եկամուտների ծառայություն ներկայացվող տեղեկանքը հնարավոր է ուղարկել առցանց՝ առանց բանկ այցելելու: Ցանկացած անձ հնարավորություն ունի նաև նախքան հիփոթեքային վարկի համար դիմելն ինքնուրույն՝ բանկի պաշտոնական կայքում ստեղծված հատուկ հաշվիչի միջոցով հաշվարկել, թե որքան գումար կարող է իրենց տրամադրվել և որքան կկազմի ամսական մարումների չափը:


2020թ.-ի վերջի դրությամբ մանրածախ բիզնեսի հաճախորդներին բանկի կողմից տրամադրված վարկերի ծավալը կազմել է ավելի քան **110 մլրդ ՀՀ դրամ**, որից սպառողական վարկերի ծավալը կազմել է ավելի քան **72 մլրդ ՀՀ դրամ** (ներառյալ ոսկու գրավադրմամբ վարկերը), ինչը մանրածախ բիզնեսի վարկային պորտֆելի գերակշռող մասն է (ավելի քան **66%**), հիփոթեքային վարկերի ծավալը՝ **25 մլրդ ՀՀ դրամ**՝ ընդհանուր կշռի մեջ կազմելով **23%**, իսկ քարտերով տրամադրված վարկային գծերի ծավալը՝ շուրջ **13 մլրդ ՀՀ դրամ**՝ ընդհանուր կշռի մեջ կազմելով **11%**:

2020թ.-ին Մանրածախ բիզնեսի վարկային պորտֆելի կառուցվածքը



2020թ.-ի դրությամբ անհատների կողմից բանկում ներդրված ցպահանջ և ժամկետային ավանդների ծավալը գերազանցել է **180 մլրդ ՀՀ դրամը**: Անհատների ժամկետային ավանդների ծավալը տարեվերջին կազմել է **144 մլրդ ՀՀ դրամ**, իսկ ցպահանջ ավանդների և ընթացիկ հաշիվների ծավալն՝ ավելի քան **36 մլրդ ՀՀ դրամ**:

Մանրածախ բիզնեսի ավանդային պորտֆելի դինամիկան՝ ըստ տարիների (մլրդ ՀՀ դրամ)



Դրամական փոխանցումներ

2020թ.-ին արագ դրամական փոխանցումների շուկայում բանկը շարունակեց լինել առաջատարներից մեկը: Հաշվետու տարում բանկը համագործակցեց Հայաստանում գործող դրամական փոխանցումների առավել ակտիվ 5 համակարգերի հետ՝ **Money-Gram, RIA Money Transfer, Unistream, XPRESS Money և Converse Transfer**:

□ 2020թ.-ին ՀՀ բանկային համակարգում արագ դրամական համակարգերով վճարված փոխանցումների գծով բանկի մասնաբաժինը կազմել է շուրջ 12%:

COVID-19-ի տևտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրեր

Հայաստանում COVID-19 համաճարակով պայմանավորված բանկն միացել է կառավարության «Կորոնավիրուսի սոցիալական հետևանքները չեզոքացնելու» 8-րդ և 9-րդ ծրագրերին՝ իրականացնելով ծրագրերի սպասարկմանն ուղղված աշխատանքներ: Կառավարության ծրագրերի շրջանակում բանկը սպասարկել է ավելի քան 35 000 հաճախորդ՝ **1,5 մլրդ ՀՀ դրամ** գումարի չափով:

ՓՄՁ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

2020թ.-ի ընթացքում ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի զարգացման նպատակով բանկը իրականացրել է մի շարք նախագծեր և ծրագրեր: Կատարված աշխատանքի հիմնական նպատակը եղել է փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացումը, ինչպես նաև բիզնեսի կառավարման համար անհրաժեշտ գիտելիքների և փորձի փոխանակման համար համապատասխան միջավայրի ստեղծումը:

□ **ՓՄՁ հաճախորդների քանակը 2020թ.-ին նախորդ ժամանակահատվածի համեմատ աճել է 8%-ով:**

Բիզնես դասընթացներ ՓՄՁ ղեկավարների համար

2020թ.-ին բանկը ՓՄՁ գործընկերների համար շարունակեց անվճար բիզնես դասընթացների շարքը: Համաճարակով պայմանավորված դասընթացների մի մասն իրականացվեց առցանց եղանակով, որի ժամանակ մասնակիցները հնարավորություն ստացան ծանոթանալու ֆինանսական և մարքեթինգային ժամանակակից գործիքներին, բիզնեսի կառավարման առանցքային մեխանիզմներին:


□ **2020թ.-ի ընթացքում ՓՄՁ ղեկավարների համար իրականացվել է 8 բիզնես դասընթաց, որին մասնակցել են ընդհանուր թվով ՓՄՁ 601 ներկայացուցիչ:**

Միջազգային շուկա դուրս գալու հնարավորություն

2020թ.-ին բանկը շարունակեց առևտրի ֆինանսավորմանն ուղղված ծրագրերը և ներդրեց Նոր պրոդուկտ՝ «Արտահանման և ներմուծման վարկային գիծ», որը հնարավորություն է ընձեռում հաճախորդներին դուրս գալ միջազգային շուկա: Այս պրոդուկտի շրջանակում արդեն իսկ տրամադրվել է շուրջ **2 մլրդ. ՀՀ դրամ** գումարի չափով վարկեր:

2020թ.-ի ընթացքում բանկի կողմից վարկային պորտֆելի առողջացմանն ուղղված միջոցառումների և տնտեսության անկմամբ պայմանավորված հաճախորդներին տրված վարկերի ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 8%-ով՝ կազմելով շուրջ **65 մլրդ. ՀՀ դրամ**: Այնուամենայնիվ, բանկի՝ իրավաբանական անձանց վարկային պորտֆելն աճել է շուրջ 24%-ով՝ կազմելով **110 մլրդ. ՀՀ դրամ**:


ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների վարկային պորտֆելի դինամիկան՝ վերջին 3 տարիների համար (մլրդ ՀՀ դրամ)



□ ՓՄՁ և կորպորատիվ վարկային պորտֆել

2020թ.-ի ընթացքում շարունակվել է նաև կորպորատիվ հաճախորդների ավանդային պորտֆելի կայուն աճի տեմպերը, ինչը ևս մեկ անգամ փաստում է բանկի նկատմամբ գործարար ոլորտի ներկայացուցիչների վստահությունը: Այսպիսով, նախորդ տարվա համեմատ տվյալ ցուցանիշն աճել է ավելի քան **2%-ով՝** հասնելով **53 մլրդ ՀՀ դրամ**:

ՓՄՁ հաճախորդների ժամկետային ավանդային պորտֆելի դինամիկան ըստ տարիների (մլրդ ՀՀ դրամ)



□ Ժամկետային ավանդներ

COVID-19-ի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրեր

Բանկն ակտիվորեն մասնակցություն է ունեցել կառավարության COVID-19-ի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

Ընդհանուր առմամբ պետական ծրագրերի շրջանակում տրամադրվել է 243 հատ վարկ՝ ավելի քան **5 մլրդ ՀՀ դրամ** ծավալով:

Covid-19 համավարակի և երկրում տիրող ռազմական դրությամբ պայմանավորված կատարվել է շուրջ 3 000 իրավաբանական անձանց գրաֆիկների վերանայում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ

Գյուղացիական տնտեսությունների զարգացման ուղղությամբ շարունակելով տարիների աշխատանքը՝ բանկը 2020թ.-ին ևս ուշադրության կենտրոնում պահեց այս ոլորտը և կառավարության հետ համատեղ իրականացրեց նոր ծրագրեր:

□ **2020թ.-ի վերջի դրությամբ գյուղատնտեսական ոլորտի հաճախորդների թիվը կազմել է 83 993՝ նախորդ տարվա համեմատ աճելով 689-ով:**

Պետական սուբսիդավորմամբ վարկեր

Բանկը միացավ նաև գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող «Ոչխարաբուծության զարգացման» պետական ծրագրին, ինչպես նաև ֆիզիկական անձանց տրամադրվող «Միկրովարկերի» ծրագրին՝ տրամադրելով 25 205 վարկ՝ **20 մլրդ 33 դրամի** չափով:


Նոր հնարավորություններ օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվելու համար

Բանկի և Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) համագործակցության շնորհիվ Հայաստանում գյուղատնտեսները հնարավորություն են ստանում մասնակցելու «Օրգանական գյուղատնտեսության զարգացում» ծրագրին՝ ստանալով օրգանական սնունդ արտադրողի հավաստագիր: Բանկի և NABU-ի համատեղ ծրագրի հաղթող ճանաչված կազմակերպությունները, ֆերմերներն ու գյուղատնտեսները, հավաստագրումից հետո հնարավորություն են ստանում անհամեմատ մեծացնել իրենց արտադրանքի արտահանման հեռանկարները:

Բանկի և Գերմանիայի բնության պահպանության միության համագործակցությունը մեկնարկել է 2015թ.-ին: Այս ընթացքում համատեղ ֆինանսական աջակցության շնորհիվ օրգանական սնունդ արտադրողի հավաստագիր են ստացել մի քանի տասնյակ տեղական արտադրողներ:


Նախորդ տարվա համեմատ **25%-ով** աճել է գյուղատնտեսական վարկային պորտֆելի ծավալը՝ տարեվերջին կազմելով ավելի քան **95 մլրդ 33 դրամ**, որի տեսակարար կշիռը բանկի պորտֆելում կազմել է **30%**՝ 3%-ային կետով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 2020թ.-ին գյուղատնտեսական վարկերի գծով բանկի մասնաբաժինը ՀՀ բանկային ոլորտում պահպանել է դիրքերը՝ կազմելով շուկայի շուրջ **50%-ը**:

**Գյուղատնտեսական վարկային պորտֆելի
դինամիկան ըստ տարիների
(մլրդ ՀՀ դրամ)**



Գյուղատնտեսական վարկային պորտֆել

**Գյուղատնտեսական ավանդային
պորտֆելի դինամիկան ըստ տարիների
(մլրդ ՀՀ դրամ)**



Գյուղատնտեսական ավանդային պորտֆելի ծավալ

COVID-19-ի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրեր

2020թ.-ի ընթացքում էլ ավելի սերտորեն շարունակվեց բանկի և կառավարության համագործակցությունը: Բանկը COVID-19-ի տնտեսական հետևանքների չեզոքացման 2-րդ ծրագրի շրջանակում տրամադրեց 30 744 վարկ՝ շուրջ **49 մլրդ 33 մլրդ դրամի** չափով:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

2020թ.-ին ներդրվել են մի շարք նոր պրոդուկտներ և լուծումներ, որոնք ավելացրել են բանկում հաճախորդների հեռահար սպասարկման հնարավորությունները՝ ապահովելով վերջիններիս անվտանգ և արագ սպասարկումը:

Հաշվետու տարում ներդրվել է ամբողջովին նոր acba digital համակարգը:

Acba digital հավելվածն առաջինն է Հայաստանում, որի միջոցով հնարավոր է կատարել իրական NFC վճարումներ և կանխիկացումներ՝ որպես վճարման և կանխիկացման միջոց կիրառելով սմարթֆոնը:

Բացի այդ, acba digital հավելվածն օգտատերերին այժմ՝ հնարավորություն է տալիս գրանցել հայկական բանկերի թողարկած քարտերը, պատվիրել Visa Virtual քարտ, կատարել ակնթարթային քարտից քարտ միջազգային փոխանցումներ՝ Visa Direct և MasterCard MoneySend համակարգերի միջոցով և շատ այլ առավելություններ, որոնք հեշտացնում և պարզեցնում են բանկային ծառայություններից օգտվելու գործընթացը:

2020թ.-ին կատարվել են նաև քարտային տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված մի շարք աշխատանքներ, որոնք ապահովել են բանկի քարտատերերի առավել անվտանգ ու հարմարավետ սպասարկումը:

2020թ.-ին բանկը Հայաստանում առաջին անգամ ներդրել և հաջողությամբ կիրառում է վերջին տարիներին աշխարհում լայնորեն կիրառվող Robotic Process Automation (RPA) տեխնոլոգիան: Այս տեխնոլոգիայի ներդրումը հնարավորություն է տվել թվային աշխատուժի կամ այլ կերպ ասած ծրագրային ռոբոտների կիրառման միջոցով ավտոմատացնել բանկի բիզնես գործընթացները և բարձրացնել ընդհանուր աշխատանքի արդյունավետությունը:

«ԱԳԲԱ ԼԻՉԻՆԳ» ՎԿ ՓԲԸ

ԱԳԲԱ Լիզինգը տարիներ շարունակ հայաստանյան լիզինգային շուկայի բացարձակ առաջատարն է: 2020թ.-ը ևս բացառություն չէր և ԱԳԲԱ Լիզինգը շուկայում կրկին պահպանեց և ամրապնդեց դիրքերը: Այս ամենի անուղղակի ապացույցն ընկերության ՅՅ լիզինգային շուկայում շուրջ 51% մասնաբաժինն է:

«Գրին Լիզինգի» հաջողությունները


2020թ.-ի ընթացքում ԱԳԲԱ Լիզինգն իրականացրել է շուրջ **4 մլրդ ՅՅ դրամի** «կանաչ» նախագծերի ֆինանսավորում՝ շարունակելով «Գրին Լիզինգ» ենթաբրենդի ներքո գրանցել բարձր ցուցանիշներ՝ «կանաչ» ներդրումների գործող պորտֆելը հասցնելով շուրջ **9 մլրդ ՅՅ դրամի**, որը կազմել է լիզինգի գործող պորտֆելի ավելի քան **30%-ը**:

2020թ.-ին ևս ԱԳԲԱ Լիզինգն ակտիվ ֆինանսավորում է իրականացրել գյուղատնտեսության ոլորտում: Ընկերությունը պետական սուբսիդավորման ծրագրերի շրջանակում իրականացրել է **294** նախագիծ՝ ընդհանուր առմամբ տրամադրելով գյուղտեխնիկայի և ագրոպարենային սարքավորումների մոտ **3 մլրդ ՅՅ դրամի** լիզինգ՝ **27%-ով** գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:


ԱԳԲԱ Լիզինգի մասնաբաժինը Հայաստանի լիզինգային շուկայում

Արդյունավետ աշխատանքի, նոր համագործակցությունների և իրականացված նախագծերի շնորհիվ 2020թ.-ի վերջին լիզինգի պորտֆելը կազմել է **25 մլրդ ՅՅ դրամ**՝ մոտ **23%-ով** աճ ապահովելով նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ:

Լիզինգի պորտֆելի դինամիկան ըստ տարիների (մլրդ ՅՅ դրամ)




2020թ.-ի լիզինգային պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի



- Առևտուր 19%
- Շինարարություն 16%
- Մանրածախ հաճախորդներին 15%
- Ծառայություններ 12.6%
- Սննդի և խմիչքի արտադրություն 12%
- Գյուղատնտեսություն 8.6%
- Արտադրություն 7%
- Տրանսպորտ 6.5%
- Ավիափոխադրումներ 1.8%
- ՀԷԿ-եր 1%
- Կաշվե իրերի արտադրություն 0.2%
- Այլ 1%

2020թ.-ի լիզինգային պորտֆելի կառուցվածքն ըստ մարզերի



- Երևան 62%
- Արմավիր 7%
- Արարատ 6%
- Շիրակ 5%
- Վայոց Ձոր 1%
- Արագածոտն 4%
- Լոռի 1%
- Կոտայք 8%
- Տավուշ 1%
- Սյունիք 1%
- Գեղարքունիք 4%


ԱՄՈՆՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ ՓԲԸ

«Ամունդի-ԱԿԲԱ-ն հիմնադրվել է 2013թ.-ին՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ և Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ՝ ֆրանսիական Ամունդի բաժնետիրական ընկերության կողմից, համապատասխանաբար **49%** և **51%** բաժնեմասնակցությամբ:

Ֆրանսիական Ամունդին գործունեություն է ծավալում աշխարհի **36 երկրում՝** տարածաշրջանում ներկայացված լինելով միայն Հայաստանում:

□ **2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ամունդի-ԱԿԲԱ-ն կառավարման ներքո ուներ շուրջ 190 մլրդ ՀՀ դրամ ակտիվներ:**

Ակտիվների մեծությունը (մլրդ դրամ)



Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու տարում ևս Ամունդի-ԱԿԲԱ-ն գրանցել է բարձր ցուցանիշներ: Հավասարակշռված, Պահպանողական և Կայուն եկամտային կուտակային կենսաթոշակային ֆոնդերերը 2020թ.-ին ապահովել են համապատասխանաբար **10.7%**, **10.6%**, և **9.8%** եկամտաբերություն, իսկ երեք ֆոնդերի՝ ստեղծման պահից միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է **8.7-9.9%**, կախված ֆոնդի տեսակից:

Ֆոնդերի եկամտաբերությունն ըստ տարիների

Ֆոնդի անվանում	Միջին տարեկան եկամտաբերություն	2018թ.	2019թ.	2020թ.
Հավասարակշռված	9.9	4	12	10.6
Պահպանողական	9.5	4	13	10.7
Կայուն եկամտային	8.7	7	10	9.8

ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՅԻԱ

ԱԿԲԱ Ֆեդերացիան Ակբա բանկի ամենախոշոր բաժնետերն է, որի մասնակցության չափը բանկի կապիտալում կազմում է 95%:

Թվային գյուղատնտեսությունը զարգացնելու նոր հարթակ



2020թ.-ին ԱԿԲԱ Ֆեդերացիան գործարկեց Koriz բջջային հավելվածը, որը հնարավորություն է տալիս պատվիրել գյուղմթերք անմիջապես գյուղացուց առանց վերավաճառողի: Koriz բջջային հավելվածն օգնում է գյուղացիներին իրականացնել գյուղմթերքի լրացուցիչ օնլայն վաճառքներ՝ մինևսույն ժամանակ հնարավորություն տալով Երևանի բնակիչներին գնումներ կատարել անմիջապես գյուղացուց:

Հաշվետու տարվա ընթացքում Koriz հավելվածի օգտատերերի թիվը հասավ 2100-ի, գյուղատնտեսական մթերքներ վաճառող ֆերմերային տնտեսությունների թիվը՝ 120-ի, իսկ իրականացված պատվերների քանակը՝ 4026-ի:

□ **2020թ.-ի ընթացքում հավելվածի միջոցով վաճառվել է ավելի քան 5,5 տ. միրգ, մոտ 6 տ. բանջարեղեն, շուրջ 1,5 տ. հատապտուղ:**

2020թ.-ին Ֆեդերացիան ակտիվորեն շարունակել է աշխատանքներն Իմփաքթ Յաբ միջազգային կազմակերպության հետ՝ համատեղ գյուղատնտեսական ստարտափ թիմերի զարգացման ուղղությամբ:

Նոր իննովացիոն նախագիծ գյուղատնտեսության ոլորտում

Նպաստելով իննովացիոն գյուղատնտեսության զարգացմանն՝ ԱԿԲԱ Ֆեդերացիան Հայաստանի Ագրարային համալսարանին նվիրել է թվային տեխնոլոգիաների հիմքի վրա կառավարվող FarmBot ավտոմատացված համակարգը:

FarmBot-ը գյուղատնտեսական նախագիծ-ռոբոտ է, որի նպատակն է ստեղծել բաց և մատչելի տեխնոլոգիա: FarmBot-ը նախատեսված է օգնելու սնունդ աճեցնել բոլորին և յուրաքանչյուրի համար:

Աջակցություն գյուղական համայնքների զարգացմանը

Շարունակելով 2018թ.-ին ներդրված գյուղական տուրիզմի զարգացման ծրագիրը, ԱԿԲԱ Ֆեդերացիան NABU-ի հետ համատեղ ուսումնասիրեց և 550 ստացած հայտերից ընտրեց 7 շահառու տնտեսություններ, այսպիսով՝ ընդլայնելով գյուղական տուրիզմով զբաղվող ցանցի աշխարհագրությունը: Համատեղ ջանքերի շնորհիվ գյուղական տուրիզմը գալիք տարիների ընթացքում կհաղթահարի ճգնաժամը և կվերականգնի իր գրավչությունը:



Ernst & Young CJSC
 1 Northern Ave., office 27
 Yerevan, 0001, Armenia
 Tel: +374 (10) 500 790
 +374 (10) 500 705
 Fax: +374 (10) 500 706
 www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
 ԶՅ, ք. Երևան 0001
 Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
 Հեռ. +374 (10) 500 790
 +374 (10) 500 705
 Ֆաքս. +374 (10) 500 706
 www.ey.com/am

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերության
 Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են «ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերության և նրա դուստր ընկերության (միասին՝ «Խումբ») 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ամբողջական համախմբված ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով, կից համախմբված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Հետևաբար, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2021թ. ապրիլի 27-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք: Այդ եզրակացությունը ներառում է նաև տեղեկատվություն աուդիտի առանցքային հարցերի վերաբերյալ:



EY

**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

***Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության
պատասխանատվությունը***

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Շանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» (վերանայված) աուդիտի միջազգային ստանդարտ 810-ին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝

Մարիա Իգնատևա

Գլխավոր տնօրեն՝

Էրիկ Հայրապետյան



27 ապրիլի, 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	<u>2020թ.</u>	<u>2019թ.</u>
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	66,398,135	55,915,251
Առևտրային արժեթղթեր	319,353	251,177
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	250,207	277
Պահանջներ բանկերի նկատմամբ	57,171,584	30,523,274
Ներդրումային արժեթղթեր	17,405,067	22,760,449
Հաճախորդներին տրված վարկեր	303,018,557	275,443,307
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	25,017,394	20,312,851
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	984,442	749,442
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20,144,910	21,372,430
Այլ ակտիվներ	4,754,606	5,256,616
Հետաձգված հարկային ակտիվներ	167,436	27,901
	495,631,691	432,612,975
Ընդամենը ակտիվներ		
Պարտավորություններ		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,893	200,090
Բանկերի ավանդներ և մնացորդներ	45,717	32,066
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	296,944,080	254,667,620
Թողարկված պարտքային արժեթղթեր	8,500,960	12,796,122
Այլ փոխառություններ	101,043,374	85,203,800
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	126,703	152,542
Հետաձգված հարկային պարտավորություններ	680,497	521,910
Այլ պարտավորություններ	6,570,526	5,541,956
Ստորադաս վարկեր	11,130,839	4,854,305
	425,122,589	363,970,411
Ընդամենը պարտավորություններ		
Կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	30,000,000	30,000,000
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	2,946,536	3,009,091
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	3,572,143	2,730,236
Չբաշխված շահույթ	33,990,423	32,903,237
	70,509,102	68,642,564
Ընդամենը կապիտալ		
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	495,631,691	432,612,975

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝

Հակոբ Անդրեասյան

Արմեն Հակոբյան

27 ապրիլի, 2021թ.



Գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<u>2020թ.</u>	<u>2019թ.</u>
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	43,414,170	37,167,281
Այլ տոկոսային եկամուտ	2,675,996	2,000,371
Տոկոսային ծախս	(20,185,734)	(18,209,541)
Զուտ տոկոսային եկամուտ	25,904,432	20,958,111
Վարկային կորուստների գծով ծախս	(10,774,703)	(947,662)
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո	15,129,729	20,010,449
Միջնորդավճարների գծով եկամուտ	4,916,294	4,805,567
Միջնորդավճարների գծով ծախս	(1,868,608)	(1,865,074)
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	(132,117)	1,565,583
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	2,351,308	885,642
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	399,958	223,905
Այլ եկամուտ	1,569,459	1,294,312
Ոչ տոկոսային եկամուտ	7,236,294	6,909,935
Անձնակազմի գծով ծախսեր	(10,888,617)	(10,838,738)
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,314,182)	(2,015,076)
Այլ գործառնական ծախսեր	(1,972,523)	(1,546,322)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3,466,759)	(3,595,210)
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսերի հակադարձում	49,975	72,890
Ոչ տոկոսային ծախս	(18,592,106)	(17,922,456)
Շահույթ մինչև շահութահարկ	3,773,917	8,997,928
Շահութահարկի գծով ծախս	(1,049,286)	(2,042,700)
Հաշվետու տարվա շահույթ	2,724,631	6,955,228

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(հազար ՀՀ դրամ)**

	<u>2020թ.</u>	<u>2019թ.</u>
Հաշվետու տարվա շահույթ	2,724,631	6,955,228
Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո		
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝</i>		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական գործիքների գծով իրական արժեքի զուտ փոփոխություն	258,888	270,487
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ	92,348	(270,297)
Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	(63,222)	(34)
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ/(վնաս) վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ/(վնաս)	288,014	156
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝</i>		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների գծով օգուտ	597,001	773,399
Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	(107,460)	(139,211)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ	489,541	634,188
<i>Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս՝</i>		
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող	64,352	63,696
Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս	64,352	63,696
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս) հարկումից հետո	841,907	698,040
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	3,566,538	7,653,268

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

	<i>Բաժնետիրական կապիտալ</i>	<i>Հիմնական միջոցների վերագնահատումից աճ</i>	<i>Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ</i>	<i>Չբաշխված շահույթ</i>	<i>Ընդամենը կապիտալ</i>
2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	30,000,000	3,047,359	2,032,196	28,609,741	63,689,296
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	6,955,228	6,955,228
Այլ համապարփակ եկամուտ	–	–	698,040	–	698,040
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	–	–	698,040	6,955,228	7,653,268
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	–	(38,268)	–	38,268	–
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում					
Հայտարարված շահաբաժիններ	–	–	–	(2,700,000)	(2,700,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	–	–	–	(2,700,000)	(2,700,000)
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,000,000	3,009,091	2,730,236	32,903,237	68,642,564
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	2,724,631	2,724,631
Այլ համապարփակ եկամուտ	–	–	841,907	–	841,907
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	–	–	841,907	2,724,631	3,566,538
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	–	(62,555)	–	62,555	–
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում					
Հայտարարված շահաբաժիններ	–	–	–	(1,700,000)	(1,700,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	–	–	–	(1,700,000)	(1,700,000)
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,000,000	2,946,536	3,572,143	33,990,423	70,509,102

Պրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>2020թ.</i>	<i>2019թ.</i>
Պրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	45,644,846	38,979,352
Վճարված տոկոսներ	(19,971,332)	(16,225,114)
Ստացված միջնորդավճարներ	4,992,954	4,805,567
Վճարված միջնորդավճարներ	(1,868,607)	(1,865,074)
Զուտ մուտքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	(132,117)	1,565,583
Զուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից	2,147,112	1,598,083
Վճարված այլ գործառնական ծախսեր	(220,306)	(1,206,698)
Ստացված այլ եկամուտ	313,619	944,554
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ	(10,952,092)	(10,630,177)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3,466,758)	(3,520,268)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	16,487,319	14,445,808
<i>Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում</i>		
Առևտրային արժեթղթեր	(68,176)	(251,177)
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	(249,870)	4,091
Պահանջներ բանկերի նկատմամբ	(26,633,310)	(24,857,050)
Հաճախորդներին տրված վարկեր	(36,695,515)	(70,982,124)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	(4,051,999)	(6,783,081)
Այլ ակտիվներ	990,943	759,211
<i>Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/(նվազում)</i>		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	(120,116)	150,940
Բանկերի ավանդներ և մնացորդներ	13,660	613
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	42,136,691	50,996,468
Այլ պարտավորություններ	1,300,782	421,336
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված) / ստացված գործառնական գործունեությունում մինչև շահութահարկը	(6,889,591)	(36,094,965)
Վճարված շահութահարկ	(1,226,755)	(2,924,697)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված) / ստացված գործառնական գործունեությունում	(8,116,346)	(39,019,662)
Պրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,215,321)	(2,869,843)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր	131,840	206,220
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(8,724,750)	(481,815)
Ներդրումային արժեթղթերի վաճառք և մարում	15,139,588	5,763,327
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված / (օգտագործված) ներդրումային գործունեությունում	4,331,357	2,617,889
Պրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	-	5,263,384
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(3,631,337)	(1,553,514)
Այլ փոխառությունների ներգրավումից մուտքեր	47,077,963	51,957,148
Այլ փոխառությունների մարումներ	(33,580,438)	(37,805,078)
Ստորադաս վարկերից մուտքեր	7,098,874	4,830,467
Ստորադաս վարկերի մարումներ	(950,933)	-
Վճարված շահաբաժիններ	(1,700,000)	(2,700,000)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված / (օգտագործված) ֆինանսավորման գործունեությունում	14,314,129	19,992,407
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(53,199)	(50,323)
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	6,943	69,977
Պրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	10,482,884	(16,389,712)
Պրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	55,915,251	72,304,963
Պրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	66,398,135	55,915,251

(հազար ՀՀ դրամ)

Ծանոթագրություն 1

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերությունը պետք է հրապարակի իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

Կից ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունները և կից ծանոթագրությունները, քաղված են Խմբի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կից ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական համախմբված ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկությունները, որոնց բացահայտումը պարտադիր է համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի հետ կարելի է ծանոթանալ «ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերության էլեկտրոնային կայքում:

